ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Դեկտեմբերի 12-ին Երևանում տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը:

Ժողովը ներածական խոսքով բացեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Հասարակության զարգացման գործում գիտության դերի բարձրացումը, որը մեր օրերում բնորոշ է ամբողջ աշխարհի համար,— ասաց նա,— առանձնապես կարևոր է անտեսական առաջընթացի ուղիով վստահորեն քայլող Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության համար: Այնուհետև պրեզիդենտը խոսեց գիտության պլանավորման հարցերի մասին, նշեց, որ անհրաժեշտ է մեր հանրապետությունում ուժերն ու միջոցները կենտրոնացնել գիտական այն ուղղությունների վրա, որոնք բավականաչափ բարձրակարգ դեր են խաղում ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում: Պետք է առաջին պլանում լինի գիտական հետազոտությունների որակի բարձրացման հարցը: Սխալ կլիներ կարծել, թե մեր գիտնականների ներկա մակարդակը և նրանց աշխատանքի արդյունավետությունը համապատասխանում են հարանուն պահանջներին: Լինում են դեպքեր, երբ մենք կոլեկտիվի կամ առանձին գիտնականների առջև խնդիր ենք դնում, դրա լուծման համար միջոցներ ենք հատկացնում, իսկ հետո մոռանում ենք վերահսկել բնմայի կատարման ընթացքը, չենք պահանջում արդյունքներ: Առանձին ինստիտուտների և լաբորատորիաների աշխատանքում թույլ են տրվում անջատվածություն, դանդաղկոտություն, թույլ է կապը պրակտիկայի հետ:

Այնուհետև պրեզիդենտը անդրադարձավ հանրապետությունում գիտության նոր ուղղությունների զարգացման հարցերին, որոնք նպաստում են հետագա տեխնիկական առաջադիմությանը և ժողովրդա-տնտեսական խնդիրների կատարմանը:

«Ռուսաստանի պատմական դերը հայ ժողովրդի ճակատագրում» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիկոս Մ. Պ. Ադայանը:

— Ռուս մեծ ժողովուրդը հսկայական դեր է խաղացել հայ ժողովրդի կյանքում,— ասաց նա:—Եթե հայ ժողովրդի պատմության մեջ XX դարի մեծագույն իրադարձությունը սովետական իշխանության հաստատումն է, ապա XIX դարի կարևորագույն իրադարձությունը եղավ Արևելյան Հայաստանի միանալը Ռուսաստանին: Դա բացառիկ դեր խաղաց մեր ժողովրդի տնտեսական և կուլտուրական կյանքում, դրա հետևանքով հայ ժողովուրդը հնարավորություն ունեցավ մասնակցելու Վ. Ի. Լենինի գլխավորած հեղափոխական պայքարին: Այնուհետև զեկուցման մեջ խոսվեց Հայաստանում սովետական իշխանության հաստատման պատմության, նրա առանձին դրվագների և իրադարձությունների մասին, բերվեցին բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են այն մեծ, անշահախնդիր օգնությունը, որը Հայաստանին ցույց տվեցին Սովետական Ռուսաստանը և Անդրկովկասի հարևան հանրապետությունները: Ռուս և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը մեր ժողովրդին հնարավորություն տվեց իրականացնել սոցիալական ու ազգային ազատագրության՝ դարերով փայփայված երազանքը, հասնել իսկական վերածնության ու բարգավաճման:

Ընդհանուր ժողովում տեղի ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նոր իսկական անդամների և թղթակից-անդամների ընտրությունները: Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին՝ Լ. Հ. Միրզաբեկյանը («Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա»), Վ. Հ. Ղազարյանը («Բուսաբանություն և բույսերի ֆիզիոլոգիա»), Բ. Ն. Առաքելյանը («Հնագիտություն»), Գ. Բ. Ջահուկյանը («Լեզվաբանություն»): Թղթակից-անդամներ ընտրվեցին՝ Ն. Հ. Առաքելյանը («Մաթեմատիկա»), Ս. Գ. Մացոյանը («Քիմիա»), Վ. Բ. Ֆանարջյանը («Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա»), Հ. Գ. Բակլավաջյանը («Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա»), Է. Գ. Աֆրիկյանը («Միկրոբիոլոգիա»), Գ. Խ. Սարգսյանը («Արևելագիտություն»), Ռ. Վ. Ջարյանը («Արվեստաբանություն»), Է. Մ. Ջրբաշյանը («Գրականագիտություն»): Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի օտարերկրյա անդամ ընտրվեց Փափազ Զաոլզ Հուաշը (ԱՄՆ, «Ռադիոֆիզիկա»):

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ